ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 350
18 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 1 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12 » դեկտեմբերի 2017 թվականի N 115

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԻԿԻ ԵՐԵՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Մրգաշեն համայնքում 203-019 ծածկագրով 0.2հա արդյունաբերական նշանակության հողամասի սեփականատեր Գևորգ Երեմյանի դիմումը՝ նշված հողամասի գործառնական նշանակությունը ճշտելու և արդյունաբերության արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության ճշտումը կատարելու մասին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, <<Հաստատված քաղաքաշինական ծրագրերի փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն որոշմամբ *որոշում եմ.*

1.Մրգաշեն համայնքում Գևորգ Խաչիկի Երեմյանի սեփականությունը հանդիսացող 0.2հա, 203-019 ծածկագրով հողամասն ըստ գործառնական նշանակության դասել արդյունաբերության, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ գործառնական նշանակության դասին

2. Սույն որոշումն ուղարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված հողամասին արդյունաբերության օբյեկտների հողերի գործառնական նշանակությունը սահմանելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 12
գ.Մրգաշեն